

# Շնորհակալական նամակ Վարդան Թաշճեանին

Սիրելիներ Արա, Վահէ, Միսակ եւ Մելգոնեանի 1968-ի  
շրջանաւարտներ,

Պարտք կը զգամ անզամ մը եւս իմ խորագգաց  
շնորհակալութիւններս  
եւ գնահատանքս արտայայտելու ձեր բոլորին եւ ի մասնաւորի ձեզի  
թանկագին

բարեկամներ Արա, Վահէ եւ Միսակ, այն յարգանքին, սիրոյն եւ  
պատիւին համար, զորս ընձեռած եղաք ինձի եւ իմ տիկնոջս,  
Հինգշաբթի, 17 Մայիս 2018-ի

երեկոյեան, Երեւանի Մկրեան հաստատութեան գորգասրահին մէջ,  
ձեր

շրջանաւարտութեան 50 ամեակի համախմբման եզրափակիչ  
հանդիսութեան,

գեղարուեստական կոկիկ յայտագրի հմայիչ մըթնոլորտին մէջ:

Կրթական մշակի մը հանդէպ ձեր ցուցաբերած երախտապարտ  
ոգին, ձեր անկեղծ զգացումները, ազնուական եւ օրինակելի արարքը  
ամոռանալի փորձառութիւն եւ յիշատակ պիտի մնան կեանքիս մէջ:

Որքան ուրախ զգացի ինքզինքս շրջապատուած՝ նախկին  
աշակերտներով

որոնցմէ մի քանին պէտք է խոստովանիլ որ տեսած չէի կէս դարէ ի  
վեր: Անոնց

ֆիզիքական փոփոխութիւնը աննկատ անցաւ, երբ յայտնի եղաւ թէ  
ինչպէս

իւրաքանչիւրը, Մելգոնեանցիի ոգիով ու կամքով կրցած է կերտել  
փայլուն

ապագայ, երջանիկ ընտանիք եւ դարձած սիրասուն թոռներու տէր:

Ողջ մնաք բոլորդ, որ բարձր պահեցիք մեծ բարերարներուն  
յիշատակը,

Մելգոնեանէն հեռու, Արարատեան Մասիս քաղաքի թիւ 2 հիմնական

դպրոցի

կամարներուն տակ «Անմահ Լուսոյ»-ի սքանչելի մեկնաբանութեամբ նորահաս

սերունդի ներկայացուցիչներու մատղաշ շրթներէն: Արցունքը քիչ եկաւ մեր

յուզումը զսպելու, պրաւօ Տիգրան Ալթուեանին եւ Վահան

Մուրատեանին, արժանի են երկարատեւ ծափահարութեան:

Վարձքերնիդ կատար, հայրենի երկնակամարին տակ եւ մեր սուրբ հայրենի

հողին վրայ վեց հրաշալի աննախընթաց օրերու բացառիկ պահերուն համար, եւ ընդհանուր առմամբ համախմբումի ծրագիրը

յաջողութեամբ պսակելու ձգտող ձեր անխոնջ, սպարիչ աշխատանքներուն համար:

Եւ վերջապէս իսկական յուզումս կ`ուզեմ յայտնել նաեւ հրաշալի յուշանուէրին համար, սրտանց շնորհաւորելով եւ ձեր ճաշակը եւ թէ հարկաւ զայն պատրաստող արուեստագէտը:

Կարօտալի համբոյրներ Սիլվայեն եւ ինձմէ` ձեզի, ինչպէս նաեւ Հուրիկին

Էլսիին եւ Մարօյին:

Ի մօտոյ դարձեալ տեսնուելու յոյսով ու եղբայրական սիրով`

Վարդան